ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

2014-2015թթ. Արտաքին կապերի բաժնի գործունեության հաշվետվություն

ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն»-ի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամ»-ի ֆինանսավորմամբ «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում /ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ/ լրացուցիչ հեռավար շարունակական կրթության կազմակերպում» ծրագրի /այսուհետ՝ Հեռավար ծրագիր/ շրջանակներում 2014թ. մայիսի 12-ից 16-ը ծրագրի խորհրդատուներ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Արտաքին կապերի բաժնի պետ Ա. Հարությունյանը, Կրթության որակի ապահովման բաժնի պետ Ն. Վարդանյանը, և Ռադիոտեխնիկա և կապ ամբիոնի վարիչ Տ. Զաքարյանը Աթենքի Կապի և տեխնոլոգիաների համալսարանի հրավերով գործուղվեցին Աթենք, որտեղ, բացի տարբեր գործնական հանդիպում-քննարկումներից, մասնակցել են նաև հնգօրյա վերապատրաստման դասընթացներին և ծանոթացել հեռավար կրթության կազմակերպման հունական փորձին: Ծրագրի մասնակիցների խոսքով՝ գործուղման կարևորագույն ձեռքբերումներից է Հունաստանի հեռավար կրթության կազմակերպման գործում մեծ փորձ ունեցող «Արնոս» ընկերության հետ հետագա համագործակցության վերաբերյալ հուշագրի ստորագրումը:

Միևնույն ծրագրի շրջանակներում Պարմայի համալսարանի պրոռեկտոր, հեռավար կրթության կազմակերպման գծով փորձագետ Աննա Մարիա Թամմարոն հրավիրվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և քառօրյա վերապատրաստում անցկացրել ՀՀ ԳԱԱ դասախոսների, անձնակազմի, ինչպես նաև այլ ԲՈՒՀ-երի ներկայացուցիչներին, որի շրջանակներում 36 մասնակից ստացան մասնակցության հավաստագիր:

Միևնույն ծրագրի շրջանակներում 2014թ. սեպտեմբերի 15-ից 19-ը ՀՀ ԳԱԱ աշխատանքային թիմը այցելեց Պարմայի համալսարան, Իտալիա: ՀՀ ԳԱԱ աշխատանքային թիմը այցելություն կատարեց Պարմայի համալսարանի Տեղեկատվության ինժեներիայի ֆակուլտետ, որտեղ մասնակիցներին ներկայացրեցին հեռավար կրթության իրանացման պատմությունը իրենց համալսարանում և Տեղեկատվության ինժեներիայի ֆակուլտետի դերակատարությունը հեռավար կրթության ոլորտում: ՀՀ ԳԱԱ Արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը հակիճ ներկայացրեց ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն, Կենտրոնի գործունեությունը առ այսօր և մասնավորապես Հեռավար ծրագրի իրականացման ընթացքը: Մասնակիցները քննարկեցին

հետագա համագործակցության հեռանկարները և Պարմայի համալսարանի Տեղեկատվության ինժեներիայի ֆակուլտետի հետագա ներգրավվածության հնարավորությունները:

ՀՀ ԳԱԱ աշխատանքային թիմը այցելեց UNIPR CoLab՝ Պարմայի համալսարանի Դասավանդման և ուսումնառության նորարարության կենտրոն, որը գտնվում է Համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի մասնաբաժնում: Հանդիպման ընթացքում պրոֆ. Մարիա Վալերոն ներկայացրեց METAV Master online՝ մագիստրոսական առցանց կրթական ծրագիր «Լսատեսողական թարգմանություն» մասնագիտությամբ, մագիստրոսական առցանց կրթական ծրագրի կազմակերպման առանձնահատկությունները:

Պրոֆեսոր Ջիլիան Մանսֆիլդը՝ Բարձրագույն կրթության լեզուների կենտրոնների եվրոպական կոնֆեդերացիայի նախագահը ներկայացրեց լեզուների առցանց դասավանդման առանձնահատկությունները և մեթոդիկան, ինչպես նաև տեխնոլոգիաների ակտիվ կիրառումը լեզուների դասավանդման պրոցեսում:

Պարմայի համալսարանի պրոռեկտոր Ֆրանչեսկա Զանելան ընդունեցլ է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ թիմին և իտալացի մասնակիցներ պրոֆ. Աննա Մարիա Թամմարոյին և պրոֆ. Ֆրանչեսկո Զանիչելիին, որտեղ եռակողմ քննարկվեցին հետագա համագործակցության հեռանկարները հեռավար կրթության ոլորտում:

2014թ. հունվարի 30-ին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Ալբերտ Սարգսյանը և «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի տնօրեն Սիմոն Բաբայանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ վերապատրաստման դասընթացներ, գիտաժողովներ, սեմինարներ կազմակերպելու, Կենտրոնի ուսանողների պրակտիկայի անցկացման, հեռավար ուսուցման կազմակերպման և անցկացման, ինչպես նաև համատեղ իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին:

«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի «Որակի ապահովման ազգային համակարգի ստեղծում և ամրապնդում» ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենրոնի չորս աշխատակիցներ՝ ՈԱ բաժնի ղեկավար Նարինե Վարդանյանը, ՈԱ բաժնի մասնագետ Գոհար Գրիգորյանը, SS բաժնի ղեկավար Արմեն Սարգսյանը և «Իրավագիտություն» ամբիոնի վարիչ Սիմոն Բաբայանը՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն Ա. Սարգսյանի ղեկավարությամբ 2014թ. հունիսի 20-27-ը մեկնեցին Պրահա՝ Կարլովի համալսարան՝ փորձի փոխանակման նպատակով: 5-օրյա հագեցած և ինտերակտիվ հանդիպումների ընթացքում երկու բուհերի ներկայացուցիչները քննարկեցին բազմաթիվ հարցեր, անդրադարձան մի շարք խնդիրների, որոնք հիմնականում առկա են ինչպես ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում, այնպես էլ Կարլովի համալսարանում:

ԵՄ Տեմպուս «VERITAS՝ Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության երրորդ մակարդակի կառուցվածքային զարգացում» ծրագրի շրջանակներում 2014թ. մայիսի 5-7ը Ավստրիայի Գրաց քաղաքում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը և արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ Անժելա Պապիկյանը

ներկայացրին ՀՀ ԳԱԱ կրթական համակարգի համապատասխանելիությունը զալցբուրգյան սկզբունքներին:

Միևնույն ծրագրի շրջանակներում 2014թ. նոյեմբերի 3-5-ը Գերմանիայի Հայդելբերգի համալսարանում կայացավ աշխատաժողով՝ նվիրված բարձրագույն կրթության երրորդ մակարդակում բարեփոխումների իրականացմանը, մասնավորապես «Փաստերի բացահայտում և ճանապարհային քարտեզի մշակում» թեմային:

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիան աշխատաժողովին ներկայացրեցին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ասպիրանտուրայի բաժնի պետ՝ Կարինե Բեգոյանը, արտաքին կապերի բաժնի պետ՝ Արուսյակ Հարությունյանը և արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ՝ Անժելա Պապիկյանը: Եռօրյա աշխատաժողովի ընթացքում հստակեցվեցին այցի հիմնական նպատակները, յուրաքանչյուր բուհ զեկուցեց ծրագրի առկա իրավիճակի, խնդիրների և դրանց լուծման հնարավոր ճանապարհների մասին, ինչպես նաև քննարկվեցին հետագա ծրագրային գործողությունները և սահմանվեցին վերջիններիս իրականացման ժամկետները: 2015թ. նոյեմբերի 14-29-ը մասնակից հաստատությունների համար ճանաչողական այց էր կազմակերպվել դեպի եվրոպական առաջատար բուհեր: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայից մասնակցում էին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Ալբերտ Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանը և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը: Ճանաչողական այցի շրջանակներում ծրագրի մասնակիցներն այցելել են Շվեդիայի Տեխնոլոգիաների KTH թագավորական ինստիտուտ, Իսպանիայի Ջիրոնա, Մեծ Բրիտանիայի Բաթ Սփա և Գերմանիայի Հայդելբերգ համալսարաններ:

Այցի շրջանակներում յուրաքանչյուր համալսարանում տեղի է ունեցել աշխատաժողով, որտեղ ներկայացվել են տվյալ երկրի բարձրագույն կրթության համակարգը, մասնագիտական կրթական ծրագրերի ձևաչափը, կրթության որակի ապահովման մոտեցումները, ինչպես նաև մանրակրկիտ քննարկվել են ասպիրանտական կրթության կազմակերպման տվյալ երկրի փորձը, ասպիրանտների ղեկավարման և գնահատման սկզբունքները:

2015թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժինը հանդիպում էր նախաձեռնել «Էրազմուս+» ազգային գրասենյակի ներկայացուցիչների հետ, որոնք ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մասնագիտական ամբիոնների և վարչական անձնակազմին «Էրազմուս+» ծրագրի K1 գործողության շրջանակներում ներկայացրին կրեդիտային շարժունությունը:

2015թ. նոյեմբերին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն միացել է Բարձրագույն կրթության հայկական եւ ռուսական կազմակերպությունների միությանը և ստորագրել համապատասխան հուշագիր:

2015թ. նոյեմբերի 9-ին փոխըմբռնման հուշագիր է կնքվել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի միջև «Բիզնեսի կառավարում» մասնագիտության հեռավար մագիստրոսական կրթություն իրականացնելու նպատակով՝ համատեղ դիպլոմների շնորհմամբ:

2015 թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Ա. Գ. Սարգսյանը և Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի ռեկտոր Ա. Ա. Ֆեդուլինը պայմանագիր կնքեցին՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև կրթական տուրիզմի զարգացման վերաբերյալ:

2015թ. դեկտեմբերի 24-ից մեկնարկեց «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի «Կրթության բարելավում» ծրագրի «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» շրջանակներում ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի հետ համատեղ իրականացվող «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագիրը:

Արտաքին կապերի բաժնի պետ՝ Ա. Հարությունյան